

ԻՐԱՆՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՐԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստիլարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Սոսաւահմանի համար (երկու քիւր մեկ
տարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԻՏԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
ևս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Իրանացեան տղը 20 սանթիմ. երե-
կեւ տեղի անգլաներու համար 20 օ/օ
գեղյ կը շինի:

ՍՈՒԹԱՆԸ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ

Պատրիարքարանի եւ երկուքի մի-
ջեւ տեղի ունեցած վերջին միջադէպին
առթիւ «Թան» հետեւեալ խմբագրա-
կանը գրած է.

Թէեւ հանրային կարծիքը կը-
սկսի վարժուիլ հրաժարականներու
մատուցման և մերժման փոքրիկ
խաղին, ուր կը սահմանափակուին
Սուլթանին և Հայոց Պատրիար-
քին առերեւոյթ յարաբերութիւն.
ները, աւելորդ չէ սակայն ինչի
նոր միջադէպը որ ծագեցաւ Գուս-
թիւի և Երուսղի միջեւ. Օր-
մանեան Պատրիարք այս անգամ
կուզէ եղբւր անկեղծօրէն և նոյն
խիւ անհրաժեշտաբար գործէ քա-
լով՝ առանց ալիւս վերականգնու-
իլ պաշտօնը. խառն ժողովը ի-
րեն հետեւած է միահնդոյն կեր-
պով:

Ըստ երեւոյթին ճշմարիտ տազ-
նապ մըն է որ կ'սկսի. Ասիկայ
առաջ կուգայ այնպիսի վայրկեա-
նի մը, յորում Հայոց Պատրիարքը
չառ լուրջ և շատ իրական շնորհ-
ներ ձեռք բերած էր Սուլթան
Ապտիլ-Համիտի երախտագէտ բա-
րեւորութենէն: Ինք չէր որ Հա-
յոց և Երևոտաւարդ թուրքերու
պահանջումներուն դէմ զգոյշ կե-
ցընելու համար դիւանագիտու-
թիւն մը որ վեհանաճ ձգտումնե-
րու շատ ենթակայ չէ, հաւանած
էր Լա Հէյի վեհաժողովին ուղղել
Սուլթանին հաճելի տեսակ մը վը-
կայութիւն և այսպիսով յանգ-
նօրէն հաստատած էր թէ փոքր
Ասիոյ մէջ բարեկարգութիւնը վե-
րահաստատուած է և ժողովուրդ-
ները գոհ են:

Այս ձեռնարկը գուցէ նպաս-
տած է Օրմանեանին ետ քաշուե-
լու փափաքին ամօթի զգացում մը
արծարծելով անոր մէջ. բայց ա-
ռով վաստկած ըլլալու է իր վե-
հագետին երախտագիտութիւնը,
եթէ վեհագետներն ընդհանրապէս
և Ապտիլ-Համիտ ի մասնաւորի
սրտի անկախութիւնը գէթ քաղա-
քական առաքելութեան մը բարձ-
րացուցած չըլլային: Ինչ ալ ըլլայ
մասամբ վարչական, մասամբ կը-
ղերական մութ վեճեր յանգած

են այնքան անտանելի վիճակի մը
որ Հայոց կրօնական և ազգային
իշխանութիւնները հարկ դատած
են հրաժարիլ:

Հաւանական է որ հարստահա-
րութեանց վերականգնումը որոց կեն-
թարկուին Հայաստանի տարաբաղդ-
ժողովուրդները, թէեւ անուղղ-
պէս և լուրի կերպով, թերեւս իր
բաժինն ունեցաւ այս հրաժարա-
կանը առաջ բերող պատճառնե-
րուն մէջ: Թոյժ վրդովիչ զրոյց-
ներ շարունակ կը շրջին այս բազ-
մաշարժար ժողովուրդը կացութեան
վրայ. Բիւրդերը, իրենց ոճիւրե-
րուն անպատիժ միայն խրախուս-
ուած վերականգնել իրենց շահա-
տակութիւնները մնացած Հայե-
րուն վրայ. Նորէն ջարդերը տեղի
կ'ունենան կոր, առ այժմ մաս-
նակի: Օսմանեան իշխանութիւն-
ները, այսքան տառապած ցեղի
մը դժբաղդ մնացորդները փոխա-
նակ պաշտպանելու, մասնաւորա-
պէս Ատանայի, Տիգրանակերտի
Բաղէշի գաւառներուն մէջ, որքե-
րը ցրուել և որբանոցները շնչելէ
ետքը, բացարձակապէս ձեռնպահ
կը մնան և երբեմն իրենց հպա-
տակներուն դէմ նոր անիրաւու-
թիւններ ընելու համար միայն կը
թողուն իրենց այս ձեռնպահու-
թիւնը:

Այս բաները գիտցուելու են ոչ
միայն որպէսզի եւրոպան չափէ
իր պատասխանատուութիւնը՝ Հա-
յաստանի առաջին սարսափներուն
վերականգնման առաջ, եթէ հնար է
այս գայթակղութիւնը, ալ և որ-
պէսզի հանրային կարծիքը չը յա-
փշտակուի նիւթական շահերու ըզ-
բաղումով և փոքր Ասիոյ երկա-
թուղիներու շինութեան վերաբը-
եալ աւելի կամ նուազ նպատաւոր
պայմանակցութեանց բանակցու-
թեամբ: Չենք գիտեր թէ Պատ-
րիարքը և խառն ժողովին ան-
դամները համարձակած են երկ-
չոտ անկարկութիւն մը ընել այն-
պիսի իրողութիւններու մասին ո-
րոնք շատ ծանօթ են և որոնք
Պոստիլարի մէջ կը քննադատուին:

Ամեն պարագայի մէջ, հաւա-
նական չերեւար ըր Սուլթանը տը-
րամագիւր ըլլայ դիմադրելու, թէ՛

Օրմանեանի և իր աշակիցներուն
միահամուռ հրաժարումէն առաջ
զալիք տաքնապին, և թէ՛ ձեռք
առնել անհրաժեշտ միջոցները որ-
պէսզի Պատրիարքին դժգոհու-
թեան պատճառները վերնան և
մնացած հայերը քիչ մը ապահո-
վութիւն վայելն: Այս վերջի կէ-
տի մասին ոչ ոք կը խաբուի,
բացի թերեւս անոնցմէ որոնք շահ
ունին վստահութիւն կեղծելու,
բան մը որուն ամեն ինչ հերքում
կուտայ: Գալով առաջինին, Սուլ-
թան Համիտ իր ձգձգման սիրելի
հնարքներէն մէկուն դիմած է:
Մերժած է հրաժարականը եւ
Թանձնաժողով մը կազմած է որ
կը բաղկանայ երկու բարձրաստի-
ճան թուրքերէ և անուանի Հայ
բաշա Թարուլին Տատեանէ, քըն-
նելու համար Պատրիարքին և խա-
ռն ժողովի անդամներուն կողմէ
յայտնուած տրտուշները և գըտ-
նալու համար համաձայնութեան
մը հիմքը:

Թուրքիոյ գործերու ընթացքին
քիչ շատ ծանօթ եղող մէկու մը
համար այս խնդիրը կրնայ թաղ-
ուած համարուիլ: Այս տեսակ
քննութիւններուն ինչ արժէք եւ
ինչ արդիւնք ունենալը յայտնի
բան մըն է: Այս պաշտօնը ստանձ-
նող մարդիկը իրենց տիրով դիտա-
ւորութիւնները շուտ կը հասկնան.
Թարուլին բաշան չէ որ պիտի
պատուէ այն վարագոյրները ո-
րոնց տակ կը ծածկեն Սուլթանին
հպատակներուն ցաւերը, և որ
առնաբար ձեռք պիտի առնէ Ազգ-
հարցը՝ վերանորոգման, դատա-
պարտութեան և բարեկարգութեան
պահանջած խօսքերը արտասանե-
լով: Թերեւս տեղեկագիր մըն ալ
պիտի աւելնայ Բ. Դրան դիւանա-
տանց մէջ: Պատրիարքը և խառն
ժողովը անգամ մը ևս իրենց պաշ-
տօնին վրայ մնալու անուշ բռնու-
թեան պիտի ենթարկուին: Ապա-
հովապէս այսօրինակ միջոցներով
չէ որ վշտալից Հայաստանը պիտի
դադրի մարտիրոսանալէ կամ թէ
դժբաղդ թուրքիան քիչ մը խա-
ղաղութիւն, բարեկարգութիւն և
ազատութիւն գտնէ վերստին:

Թան

ԼԱՅԻ ՄԻ ԱՌԹԻԻ

Աչքիս առջեւ ունիմ Պերճի Ներ-
ՇընճՈՒՄՆԵՐ անուն ոտանա-
ւորներու հաւաքածոն: Միտք չ'ու-
նիմ երբեք քննադատական մը գը-
րել այդ հրով լեցուն, զղացմամբ
զեղուն գրքոյկին վրայ, որ ամ-
բող շուրջուած լինելով յեզափո-
խական ժամանակակից ինչ ինչ
դէպքերու ու խել մը չքնաղ մար-
տիրոսութեանց, մեր պաշտումին
սահմանեալ «ուսման իր» բանաս-
տեղութեան ստեղծած երեւայա-
կան բուրգէն շատ հեռի իրականցա-
ւեր կուլայ և մեզ իրաւամբ կը
բըռնկցունէ զրէժինդրութեան
սուրբ կրակով:

Կիւլիզարի նուիրած երգը թե-
րեւս Տաւրոսիկին հաւասար՝ հեղի-
նակին՝ ամենէն ջղուտը ու ամենէն
հիանալի է: Այդ մայրական աւա-
ջը, առ ցասկոտ գանգատները Աս-
տուծոյ դէմ այնքան խկատիպ ու
ճարտար՝ բնական էր, որ յուզէր
զիս սրտի խորքերէս ու հակա-
ռակ իր տառամեայ հնութեանը,
հին վերքեր նորոգելով, տեղի տար
ներկայիս:

Աստուած իմ. ան ինչ սրտա-
ճմլիկ հառաջանք մըն է, որ Պերճ
կրցեր է գնել իր երգին մէջ Կիւ-
լիզարի մօր շրթներուն վրայ. ան
ի՛նչ արիւնոտ արցունքներ վազ-
ցուցեր է այդ տարաբաղդ մօրաչ-
քերէն: Կարծես ինք եղբը է մայր
ու ողբացեր իր աղջկան առեւան-
գումը անգութ ճաղօքէն, այնքան
ինքնաբուխ լաց մըն է, որ կուլայ
Պերճ յանուն Կիւլիզարի մօր:

Անանկ ատեն մը՝ ուր
Հարուստը ամուր կը գոցէ իր
քսակը յեզափոխական գործերու
համար:

Ատեն մը՝ ուր
Դրաքէտներու ջոկատ մըն ալ
թունաւոր նէնիններով կը քնացնէ
ժողովուրդը և այսպէսով ընդհա-
նուր վհատութիւն մը առաջ կը
բերեն, ճիշդ ժամանակն է կարծեմ
վերստին հրատարակել Հայ աղջ-
կան առեւանգումին նուիրուած այդ
երգը:

Կիւլիզարի երգը ապտակ մը
թողըլլայ այդ անզգայ հարուստին:

րու երեւոյն: Թուքի կարկուտ մը ալդ հոսհոս գրադէտներու ճակատին ու անէծք մը ամեն անոնց, որոնք վհատութեան սերմը կը ցանեն մեր մէջ:

«Իրաւունք»ի լաւագոյն գործերէն մէկը պիտի ըլլայ ատոր արտատպումը:

Կը հաճի՞ք արդեօք: (*)
Տ. Ճ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սյուլէն, 30 Օգոստոս 99

Արդէն հաղորդուած է ձեզ վարժարանի հոգաբարձութեան նոր ընտրութիւնը: Վարժարանաց վերաբացման թուականը հասած է, բայց ցաւ է ըսել թէ՛ նորակազմ հոգաբարձութիւնը դեռ ո՛ր եւ է միջոց ձեռք չէ առած: Իրենց պաշտօնակիցներէ ոմանք, զիստ պաշտօնի չանցած քննադատութիւններ կընէին իրենց նախորդներու գործունէութեան մասին. ահա՛ ասպարէզը հիմայ իրենց մնաց, ինչո՞ւ չեն գործեր եւ մէջ մէկ կողմ քաշուած են. որո՞ւ կ'սպասեն: Այժմ՝ անշուշտ իրենք ալ գործնականապէս պիտի հասկնան թէ՛ որքան դժուար է պաշտօնը, եւ թէ՛ գործելը դուր քննադատութեան պէս դիւրին չէ, այլ շատ մը զոհողութիւններու եւ անձնութեան կը կարօտի:

Ձեռք ուրանար, նախորդ հոգաբարձութիւնը թէեւ ունեցաւ ինչ ինչ պակասներ եւ քննադատելի կէտեր, բայց բաղդատմամբ գործերու եւ պարագաներու յատկութեանց շատ արդիւնք ցոյց տուաւ. եւ անոր յարատեւ ու անվատ աշխատութեան շնորհիւ էր որ, տեղւոյս վարժարանը յարատեւեց առանց պաշտօնէի փոփոխութեան: Սլիկէնի գաղթականութեան սկիզբէն ի վեր այս առաջին անգամն է, որ վարժարանը երեք տարի անընդհատ կը շարունակէ:

Գիտենք, այս տողերը ոմանց հաճելի չպիտի երեւան, բայց անոնց միայն սա դիտել կուտանք թէ՛ անձնական ստոր հաշիւներ մէկգի թողնով եւ ձեռքերին խղճերնուն վրայ դնելով անկեղծականութեամբ խորհին եւ ըստ

(*) Ամենայն սիրով պիտ'արատապինք զայն մեր յառաջիկայ թուով:
ԽՄԲ.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (48)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՅՑ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐՄԸ

— օ. —

ՄԱՍՆ Բ.

Թ.

Վերջապէս կուզը ամեն կերպով ուսած ու տոկած, քիչ մը մարմնական հաւասարակշռութիւնը կորուսած վիճակի մէջ ձգեց Մինասի տունը եւ ինչապէս որ սրտակիցներէն կաղ Թադոսը հարցոց: Եղելութիւնը անոր իմացուց եւ ըսաւ թէ՛ կըր վարձատրութիւն մը պիտի ստանար Մինաս աղայէն, բայց մնացած հինգ ոսկի մը կար զոր կաղէն զատ մէկու մը յարմար չէր տեսնար:

«Ստակը պիտի առնուի, բայց այդ առեւանգութիւնը չպիտի կատարուի, առարկեց Թադոս:

— Ինչ լիաք ունի պէ եղբայր.

— Վնասը, օգուտը դուն ինծի թող, կարծեմ առեւանգութեան կատարուելը կամ չկատարուելը քեզի լիաք չունի, դուն ստակը առնելուդ նայէ, ձայն մի տար:

այնմ գործին. զի այլ են անձնական խնդիրներ, այլ են աղղային գործեր. առաջնոյն մէջ չհար կամ մնասը միայն մեր անձին կը պատկանի, բայց երկրորդին մէջ ամենքնիս ալ կը տուածենք:

Տխրութեամբ իմացած էինք վարժարանի ուսուցչական մարմնոյն հրաժարումը եւ այս առթիւ՝ անձնական եւ այլ հաշիւներէ թելադրեալ մի քանի ջուր պղտորողներու մեքենայութիւնները, բայց ուրախ ենք որ իրենց մուրաք փորելին մնացած է եւ նախորդ տարիներու գարնան պաշտօնեաները վերահաստատուած են իրենց պաշտօնին մէջ:

Ներկայս յարմար առիթ սեպտեմբեր քանի խօսք ալ ընենք տեղւոյս երկրաւորութեան մասին: Ծաւ է ըսել թէ՛ մեր քաղաքի երկրաւորները, բացառութիւնները շատ հազուագիտ, ազգային եւ կրթական խնդիրներու մասին բոլորովին անտարբեր են եւ զուրկ յառաջիմական գաղափարներէ: Իրենց ժամանակը կանցնեն պանդոկներու, սրճարաններու եւ զբօսավայրերու անկիւնները: Դպրոցական, թաղային խնդիրները բնաւ զիրենք չեն հետաքրքրեր եւ մազի չափ անգամ կարեւորութիւն չունին:

Երկրաւորներու այս վիճակը փոխանակ արգահատանք եւ զգուշացողութիւն, հրապարակաւ կը ջատագովուի ոմանց կողմանէ. ինչպէս Պ. Յի Թ. առանց խղճահարկելու փաստաբան հանդիսացած էր եւ հրապարակի վրայ երեւնալու մարմաջէն բռնուած՝ (տե՛ս Շարժում) թիւ 154) կը ջանար ծածկել երկրաւորութեան թերութիւնները եւ կուզէր ներկայացնել իբր տիպար եւ ընդունակ ամեն ձեռնարկութեանց, այժմ, չէ՛ Պ. Յի Թ., կը սխալիք, աղղայի լաւատես մի՛ ըլլաք. թերեւ զուրկ ալ լաւ ըմբռնած էք ճշմարտութիւնը, բայց չէք ուզեր խոստովանել, որովհետեւ

Կ Ա Ր Օ

Բարիք. 15 Սեպտ. 99

ԴԱՄԱՆԴՈՒԹԻՒՆ 8ՈՒՑԱՆԱԿԵՍԻՆ ԴԵՄ

Գանի մը օտարականներ Տրէյֆիւսականութեան ախոյեաններ, Ձինուորական տեսնի տուած վճռոյն պատճառաւ ուղիով պատժել Թրանսան, առաջարկած են Յուդահանդէսը արգիլելու ջանքեր ընել. «կամ Տրէյֆիւսը ազատարձակեցէք, կամ հրաժարեցէք մեր սթեր

— Ինչպէս:
— Հիմայ երբ երեկոյին Մինասին հետ գտնուիք, դեռ Յովհաննէսին տունը չը յառաջացած քսան ոսկին կըստանան, ետքը կըսես թէ՛ ընկերդ արդէն գացած կէս ժամ առաջ Հրանոյն տունը մտած է եւ երբ հոն պիտի հասնիք թեթեւ տուած մը լսելուդ պէտ առանց ո՛ր եւ է ընդդիմութեան համակիր պո անծանօթ մարդերու քեզ հետ վերաբերուելուն:

— Բայց ինչո՞ւ աւելի յստակ չես խօսիր, չըլլայ Հրանոյն ըսուածին դուն աչք ունենաս:

— Կուզ ատիկայ ինծի ձգէ՛ աւելի խօսք պէտք չէ:

— Իրաւ որ փիլիսոփայ մարդ ես, ուզածիդ պէս թող ըլլայ, ան քսան ոսկին ե՛րբ արդեօք գրպանս պիտի մտնայ:

— Այդ մասին կատարելապէս սպասեմ եղի:

Գիշերուան ժամը 2ն էր երբ Ակնի յետին անծանօթ անկիւններէ մին գտնուող ինչապէս որ աղղային սրճարանը

խններէն եւ տղարներէն, Այսպէս էր այն բանաձեւը, որով կուզէին իրենց կամքը կատարել տալ Թրանսական արդարադատութեան մէջ, որպէս թէ Յուդահան իրենց ոսկին պէտք ունեցած ըլլար:

Բայց քանի մը թեթեւօլիկներու այս կատարել լընութեան երեւոյթ մը չըստացաւ: Արդէն ամեն կողմէ բողբոջներ կը բարձրանան այս առթիւ: Տրէֆիւսի խնդրին չուրջը դարձած զրպարտութիւններով, ստախոսութիւններով մարդս որքան ալ խաբուած ըլլայ, կէտ մը կայ սակայն, որմէ անդին մարդկային արդար դատողութիւնը չը թող տար անցնիլ: Այդ կէտին հասնուած է:

Տեղի Միւսաթըրը անգլո-ամերիկեան Բարիքի գաղթականութեան օգտանը այսպէս կը գրէ. «Աղղ մը պատասխանատու չէ դատարանի մը տուած վճռոյն: Գանի մը տարի առաջ, ամերիկայի բոլոր ծանօթ կիներէն ստորագրուած խղղագիր մը մատուցուեցաւ Անգլիական կառավարութեան, արձակումը խնդրելով Ամերիկեանի մը որ ըստ ամերիկեան օրինաց չը պիտի դատաւարուէր: Արդ խղղագիրը մերժուեցաւ շատ կոպտութեամբ: Ասիկա միջազգային դէպք մը չէ:

Գաղթ ամերիկացիներուն՝ լաւ ըրած պիտի ըլլային եթէ այս հարցումը իրենք իրենց առաջարկէին: Եթէ Տրէյֆիւսը սեւամորթ մը եղած ըլլար, արդեօք դատի պիտի ենթարկուէր, արդեօք իր կեանքը իսկ պիտի կրնար ազատել:

Պէտք է յիշել որ անցիկ տարի, երեք խաղաղիներ, որոնք սեւամորթ ըլլալու ոճիւրն անգամ չէին գործած, լհրացանի բռնուեցան առանց դատի, ոճիւր մը համար, որ ինչպէս գիտենք, ուրիշները գործած էին: Այս պայմաններու մէջ աւելի լաւ է զգուշանալ ուրիշները քննադատելէ: Ասկէց զատ Լոնտոնէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ որ «Խաղաղութեան Միջազգային Ընկերութիւն»ը նիստ մը ունեցած է ուր օրակարգ մը քուէարկուած է դատաւարութիւնը Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ եղող շարժումը Յուդահանդէսի բացման դէմ: Ինչպէս որ շատ արդարացի կերպով կը գրէ մեր ընկերներէն մէկը. «Ամբողջ աշխարհը չպիտի հրաժարի հիմնալի կտորի մը ներկայացման մը ներկայ ըլլալու՝ այս պատճառաւ քանի տաքացած դուրսներ կը յայտարարեն որ Թրանսան ալ եւս չի կրնար տասը տարուան բանտորկութեան դատաւարութիւն յանցաւոր մը

մտան Մինաս, Պուտաքեան եւ Նարին Նովհաննէս. կուզ Սարգիսը ըստ իր խոստման հոն անոնց կը սպասէր: Առանց ձեւակերպութեան անիկայ մօտեցաւ նորեկներուն եւ խիստ մտերիմ ու քահանայներով եւս ալ զեռ խօսակցութիւն մը սկսաւ չորսերնուն միջեւ: Մինաս որքան ալ կը յարմարէր անոնց այսու հանգեմ մերթ ընդ մերթ տըխուր մտադրաղումի մէջ կը խորասուզուէր:

«Մինաս աղա, ինչ զարմանալի մարդ ես, սեւ ծովը չղղենաւներդ չորսուեր են որ կը մտածես, կընէր ամեն անգամ Պուտաքեան երբ կը տեսնար որ առաջինը իրենց ուրախ խօսակցութեան մասնակից չէր ըլլար:»

Ժամը 3 1/2 էր երբ սեւ թափորը ճամբայ ելաւ: Պուտաքեան եւ Նարին Յովհաննէս ինքնաբերական Մինասի եւ անոր զոհին պիտի սպասէին ետքէն եղած կարողադրութեան մը համաձայն. կուզ Սարգիսը՝ Հրանոյնը բռնի առեւանգելէն ետքը, — առ այդ աղղկան եւ հօրեղբօրը ձայնը կտրելու միջոցները խորհուած էին — յանձնառու եղած էր

առանց երկրագնդի ատելութիւնը իր դէմ դարձնելու:»

ՕԳԱՆԱԻՈՒԹԵԱՆ ՎԵՂԱԺՈՂՈՎԸ

Յուդահանդէսին առեւնը իրարից ըլլալիք վեհաժողովներէն մէկն ալ օղանաւութեան Գոնկրէն է, որ պիտի ըլլայ ոչ միայն տեսական այլ գիտական փորձերով եւ բուն գիտութեան զատ, պիտի ուսումնասիրեն: Իր կիրառութիւնները: Օղանաւութեան գիտութեան մէջ՝ պիտի ուսումնասիրեն ազատ օդաւարիկներ, Լարիդի օդաւարիկներ եւս: Գործիքներու պատրաստութիւնները, անոնց ձեւը, զանոնք կայծակի դէմ ապահովելու միջոցները եւս: Իսկ իր կիրառութեանց մէջ պիտի ուսումնասիրուին, աստեղագիտութեան մէջ, գիտաւոր ստեղծող եւ արեգական ալ եւ այլ փոփոխութիւնները եւս, օդերեւաբանութեան մէջ մթնոլորտը, ամպերը բարձր խաւերու հովերը, ելեքտրական երկւոյթները այս առթիւ պիտի զբաղուին թուցիկներով որոնք շատ կատարելագործուած են, մինչեւ 3,000 մէթր բարձրանալու ժողովականները պիտի զբաղին նաեւ Բնաբանութեամբ՝ որոշելու համար սրբոյն եւ երակներու զարկի յատկանիշները, շնչառութեան եւ վերամարմնի փոփոխութիւնները, այլ եւ այլ բարձրութեանց մէջ:

Ժողովը, որու նախագահն է Մեօտօնի գիտարանի անօրէն, Պ. Ժանսէօ, շատ գիտնականներու գրած ըլլալով՝ անոնց մասնակցութիւնը ընդունած է: Ժողովը տեղի պիտի ունենայ Մեօտօնի գիտարանին մէջ:

Ա. Սեգի եւ Մ. Դալիք-Բեկ

ՀԱՐԺՈՒՄ ՄԸ

«ՀԱՐԺՈՒՄ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ձեր թիրթի շաբաթ աւուր թիւին մէջ վառնայի Ուսուցիչները փերնագրով պարբերութիւն մը երեւաց: Կը հարցնենք Ձեզ թէ այդ պարբերութեան վերջին անգործ մասը վառնայի ազգային վարժարանի ուսուցիչներուն միայն իր պատկանի թէ ոչ:

Ասեւադպիր Հոգաբարձութեան Գ. Կիւրիճեան Վառնա, 13 սեպտ. 99

Պուտաքեանի եւ Յովհաննէսի սպասելիք տեղը տանիլ յանձնել զայն: «Բեզ տեսնամ կուզիկ, ինծի չամցնես, ըսաւ Պուտաքեան անոնցմէ բաժնուելով:»

Սարգիս եւ Մինաս յառաջ ոցան վերի թաղը: Սարգիս Մինասին իր վարձքը պահանջեց, այս վերջինը սրտանց սակաւիկ մը գծկամակեցաւ, բայց փութաց տանեւհինգ սկիւն վճարել: Հրանոյնի տան յիսուն քայսպիտի մը նացած էր երբ մուծին մէջ սուրբ մեղծ մօյն մը խուցեցաւ: Մինասի նուկատը պաղ քրտինք մը պատեց, սուրբ մը իր վրայ չարաչուք աղղեցութիւն մը ըրած էր:


«Մատուցեցանք Սարգիս, ըսաւ ցած ձայնով Մինաս:

— Լուռ կեցիր:»

Մուծին մէջ հինգ ստուեր յառաջացան:

Տեսնողս մաքառումէ մը ետքը ամեն բան թաղուեցաւ գիշերուան խորհրդաւոր լուսութեան մէջ եւ առջի անշարժութիւնը տիրապետեց:

ՋՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄ



Տեղական զրպարտիչ թերթի շաբաթ օրուան թիւին մէջ «նա» լսակ խմբագրութեան» վերնագրով և թ. թ. ստորագրութեամբ յօդուած մը կրեւաց, որ մեզ դէմ ձրի յարձակումներ կը պարունակէր:

Յօդուածագիրը շուրջ տարիէ մը ի վեր վառնայի թաղ. խորհրդարանի թափուր մնացած ըլլալը յիշելով, անոր պատճառը մասամբ մեզ վերագրել կը ջանար թէ մինչեւ վերջին շաբաթներս մենք զաբարիակուն լուսթիւն պահած ենք, մէկէ աւելի հաշիւներ ունենալով: Ասկէ աւելի ձրի յարձակում չէր կրնար ըլլալ մեզ դէմ, ցորկափ այսօր բոլոր վառնայաբնակ հայութիւնը գիտէ թէ ինչպէս «իրաւունք»ի 64 թիւով, նոյնպէս և սկիզբէն ի վեր մենք եղած ենք ձայն բարձրացնողը թէ ամեն բանէ առաջ թաղ. խորհրդայ ընտրութիւնը անհրաժեշտ է, թայց կերեւայ որ Պր. Յ. թ. ինք խուլ ու կոյր մը եղած է ու չէ լսած և տեսած թէ այդ տեսակէտով ալ մենք մեր պաշտօնին պահանջը լիովին գործադրած ենք, Ուստի քանի որ իր աչքերը նոր բացուած են—իր սիրեցեալ բահանային դատապարտութենէն վերջ իրեն պէս ուրիշ փորձ ցաւեր ունեցող ներալբանները ընել ուզած են—հոս բաւական կը սեպենք իրեն մատնանիլ ընելու «իրաւունք»ի ներկայ տարւոյ թիւ 12ի մէջ (20 փետրվար) «Վառնայի թաղականութիւնը» վերնագրով մեր յօդուածին հետեւեալ եզրակացութիւնը.

«Ահա այս լուսթեան մէջ մենք կրկին ձայն կը բարձրացնենք ու կը գոչեմք.—նոր թաղ. խորհուրդ պէտք է ընտրել. և այս անհրաժեշտ է մեր աչք. հաստատութիւնները կանգուն պահելու և մեր պատկազ պապաւն չի մեռնելու համար:»

Արշալոյսը դեռ նոր իր արծաթէ շողերը սփռած էր. Յովհաննէս աղայի փողոցը ոգեւորեալ ամբոխ մը խոնուած էր:

«Աստուած պատժեց զայն այսպէս հըրպարակաւ խայտառակելով:—Կուգ Սարգիսն հետ այս վիճակին մէջ ինչ գործ ունի: Իրաւ որ հոս անլուծելի հանելուկ մը կայ: Սարգիսը Վաղը ամեն բան դուրս կուտայ խօսեցաւ կաղ թաթոս վերի ենթադրութիւնները ընողներուն հետ:»

Փութանք վերջապէս ըսելու որ Միւնա եւ կուգ Սարգիս ամրապինդ կապուած վիճակի մէջ փողոցին մէջ տառապած էին. անոնց երկուքին ալ բերանը բամպակ թխուած եւ բամպակէն դուրս ելնելը արգիւիւտ համար բերանակապ ալ աւելցուած էր:

Սայտառակութիւնը մեծ էր:

Կուգ Սարգիս անփութութեամբ ծիծաղել կաշխատէր. իրաւ է թէ բաւական աննախանձելի գիշեր մը անցուցած էր. այլ իր համոզումով որքան ալ գիշերը տաժանելի եղած ըլլար քրտան օսմանեան կարմիրէն աւելի չէր

Այս տողերը անգամ մըն ալ կարդացէք կամ կարդացնել տուէք ու հասկցէք թէ որչափ անիրաւ էք ձեր յարձակումին մէջ:


Հոգաբարձութեան ընտրութեան մասին ալ քանի մը անորոշ խօսքեր թափթփած էք մեզ դէմ: Այդ ընտրութիւն փութացնելու համար մենք չէինք կրնար դեր ունենալ, քանի որ ուղղակի կառավարութեան վերապահուած է այդ գործ: Իսկ ընտրուողները ո՛չ մեր մտերիմներն են և ո՛չ նոյն իսկ «իրաւունք»ի բաժանորդ: Կը հասկնա՞ք թէ բնաւ իրենց հետ ո և է անձնական շահու. կո. պով մը կապուած չենք. հետեւաբար ուրախ կամ տխուր ըլլալու բնաւ պատճառ մը չի կայ, Հոգաբարձութեան և ազգ. վարժարանաց տեսակէտով եթէ մեզ ուրախացնող կէտ մը կայ սա է թէ ազգ. երկսեռ վարժարանի տնօրէնութիւնը ամեն կասկածէ վեր անխառն բարոյականի տէր անձ. նաւորութեան մը յանձնուած է, որ սկիզբէն ի վեր մեր գլխաւոր փափաքներէ մին եղած էր:

Այս տեսակէտով Պր. Յ. թ. դու ալ մեզ հետ ուրախ պէտք է ըլլաս, ինչպէս բոլոր վառնացիք, և վստահ եղէք թէ նոր սերունդը, ազգին մանկտին է շահողը:

Գալով հանգանակիչ մասնախմբին անյաշնողութեան տեսակէտին. ձեր պատմածը եթէ սխալ չէ, իսկապէս մեզ տխրեցուց. այս մասին ուրիշ առթիւ կը գրենք:

Յ. Գ.

ԼՐԱՔԱՂ



Պատրիարք Օրմանեանի հրաժարած ըլլալու լուրը կանխահաս կը թուի. որովհետեւ այս շաբաթ օրուան (11 սեպտ.) Պոլսոյ թերթերը կը գրեն թէ՛ թէեւ Պատրիարքը 15 օրէ ի վեր անձնական տկարութեան պատճառաւ իր Բե.

արժեր:

Մինասի գոյնը մոռելային էր: Ոչ ոք չմտեցաւ անոր. Պուտաքեան եւ նարին Յովհաննէս եկան ազատեցին զայն այդ հրապարակային խայտառակութենէն. Մինաս տուն գնաց եւ ամօթէն տար օր դուրս չելաւ:

Կուգ Սարգիս քսան ոսկիով հաճոյս լի խրախմբներ սարքեց իր սրտակիցներուն հետ ուտելով, խմելով:

Մինասը մեր ստանակին համար կաղ թաթոսի հրահանգով կթան կով մը եղաւ. եթէ ստակը լմնար անկէ կերթար ստակը ուզելու եւ ամսական մօտ երկու ոսկի կրտանար. հակառակ պարագային եթէ Մինաս իր պահանջը մերժէր միտքը դրած էր անոր իրեն ըրած անպատիւ առաջարկը հրապարակել բացայայտ կերպով. թէեւ գինիի ազդեցութեան տակ այդ մասին չատրու խօսած ըլլար ամենահամարձակ կերպով:

Ժ.

Յեղափոխական իրաւացի կամ անիրաւ պատրուակով ձերբակալուած, բանտարկուած և տանեակ տարներու

լայի բնակարանէն դուրս չելներ, սակայն Պատրիարքարանի գործակատար և դիւանապետ էֆէնտինները ամեն օր իր բնակարանը կընդունէ և անոնց պաշտօններուն վերաբերեալ հրահանգները կուտայ:

Ասկէ դատ Օրմանեան պաշտօն տուած է կրօն. Ժողովոյ Սրբազան ատենապետներուն որ փոխանորդաբար կրօն. Ժողովին ու նըպաստից Յանձնաժողովին նախագահն:

Թէեւ մենք գիտենք թէ Պոլսոյ թերթերուն համար Պատրիարքին հրաժարած ըլլալը յայտնող ընդունուած բանաձեւն է «Պատրիարքը տկար ըլլալով Ժողովոյ չի նախագահեց ու Պատրիարքարան չիջաւ» ըսել. սակայն «Իրեն փոխանորդ կարգեց ու հրահանգներ տուաւ» խօսքերը հրաժարեալ պատրիարքի մը համար բոլորովին նորութիւններ են. Ուստի այս տեսակէտներով կը հետեւցնենք թէ Օրմանեանի հրաժարած ըլլալու լուրը եթէ ոչ բոլորովին սուտ գոնէ կանխահաս է:

—Կրօն. Ժողովը իւր անցեալ երեքշաբթի օրուան նիստին մէջ նկատողութեան առաւ Բաղէշի առաջնորդարանին կողմէ Պատրիարքարան հասած գրութիւն մը, որով կը յայտնուէր Գոմոց վանքի մատակարար Ծովկեան անուն անձը իր մէկ ամուսնացեալ հոմանունէն Ռուսմանիաէն Բաղէշ բերել տալով, Գոմոց վանքի տնտեսուհի կարգիւ և յետոյ հակառակ առաջնորդարանի ընդդիմութեան մարդ մը ճարելով, անոր հետ երկրորդ անգամ ըլլալով տեղւոյն Տ. Վարդան քահանային բռնութեամբ պսակել տուեր է: Կրօն. Ժողովը չեղեալ նկատեց պսակը և որոշեց անպայման կերպով, քահանայազորութենէ դադրեցնել կրկնամուսնութիւն կատարող քահանան: Նոյնպէս յանձնարարեց Բաղէշի առաջնորդարանին որպէս

համար գաղապարտուած հայերը մինչեւ մէկ աստիճան ոչ նուազ զարկ տուին ձերբակալութիւններու տնդոտ շրջանին մէջ ազգային զգացումի ծաւալումին:

Մենք վերջին տարիներս բանտ մըտնող վեհերոտ անտարբերներ կամ պահպանողականներ տեսանք որ բռնութեան ստեղծած խաւարոջին փակարաններու մէջ կրակոտ զգայուններու խառնուելով դուրս նետուեցան անտարբերութեան մահացնող քունէն եւ տեսան որ մարդկութեան մէկ ստուար մեծամասնութիւնը այսպէս թէ այնպէս բռնաւորներու վայրենի քմահաճոյքին ձեռք արգահատելի խաղալիք մը դարձած է եւ թէ քերական պարտականութիւն մը կը ծանրանայ իրաքանչիւր պատուաւոր մարդ անհատի վրայ կուտ եւ սեղմուած ուժերով բռնութեան հետ ամեն գնով պայքարել որքան ալ կոիւր անհաւատարմ եւ բիրտ եղած ըլլայ, որքան ալ յուսոյ նշոյլներ ցանցաւ ըլլան. զի վերջապէս քիչ մը ինքնագիտակցութիւն ունեցող անհատին համար պարզ է ճանաչու համա-

զի ալ եւս մատակարարի կամ ուրիշ պաշտօն չտրուի Ծովկեանին որ և է վանքի մէջ:

—Նպաստից Յանձնաժողովը, ընդ նախագահութեամբ Մանկունի Սրբազանի, Գաւառներէն վերջերս հասած գրութիւնները աչքէ անցընելով, որոշեց դրամական նպաստ զրկել Տիգրանակերտ, Պաշքալէ և Մալաթիա: Տեղեկանալով որ Պաշքալէի որբերը խղճալի վիճակի մէջ են, որոշեց յանձնարարել որ, նախապէս Յանձնաժողովին կողմէ որոշուած որբանոցին բացման համար հարկ եղած գործողութիւնները փութով կատարուին:

—Վանէն Պարսկաստան գաղթած հայ քահանայ մը, Երզնէեան, իր ապրուստը ապահովելու համար կաթողիկոսութեան դիմեր է: Այս անգամ ալ կը գրեն Դաւրէժէն թէ Ուրմիայի ազգ. դպրոցին ուսուցիչ Գ. Կարսեան հոգաբարձուներուն հետ անհամաձայնութիւն և վէճ ունենալով ինքն ալ դաւանափոխ քահանային օրինակին հետեւեր է: Ուսուցիչին՝ ըն ալ:

—Պոլսոյ «Ծաղիկ» շաբաթաթերթը օրաթերթի վերածուած է: Կոտորածներէ ու սարսափներէ առաջ Պոլսոյ մէջ միայն երկու օրաթերթ կը հրատարակուէր: Այսօր Տաճկաստանի հայոց թիւը բաւական պակասած ըլլալով հանդերձ հոն հինգ օրաթերթ կը հրատարակուի. ըստ մեզ սա միւլթարական երեւոյթ մըն է, ցորչափ նկատենք թէ ազգի մը մէջ ընթերցասիրութեան աճումը գաղափարի ու մտքի զարգացում առաջ կը բերէ և կամ այս երկուքը իրարու փոխադարձ պատճառ ու արդիւնք են:

—Աղէքսանդրիոյ Յունաց Տ. Սօֆրոնիոս Պատրիարքին մահուան առթիւ Եզրպտոսի հայոց Առաջ. Տեղապահ Յակոբ եպիսկոպոս ուրիշ հայ եկեղեցականներու

կերպութենէն կտրուկ բողոքին» ունեցած տուեալութիւնը, ան ալ բանտի մահացնող, փոսեցնող աշխարհին մէջ:

Եթէ բանտը մի քանիները չար քան զառաջինը ըրաւ, շատեր ալ զօրաւոր կամքի եւ ինքնագիտակցութեան տէր չինեց: Առաջինները կամ դաւեցին եւ կամ գաղապարտելի թուութեան մը մատնուեցան, երկրորդները անձնուէրներ դարձան, որոնց հանրածանօթ մէկ օրինակը կրնայ ներկայացնել Գում-Գաբուի 80ի դէպքի յայտնի հերոս Նազարէթ Լուսիկեանը որ հայրենի հողին վրայ իր արիւնք մատաղ ընել ուխտած էր Խաչատուրեանի մէջ վերջնականապէս յաջողած էր ալիքներու ձեռք խաղալիք երեւուն նաւակով մը փախչել հուսկ ապա անցնել վան հոն առաջին առիթով իսկ կատաղի մարտնչումէ մը ետք զոհուելու համար:

Շ. Կամսարապետ
(Շարունակելի)

ընկերակցութեամբ Յունաց մայր եկեղեցին իջնելով հանգուցեալ Պատրիարքի դազադին վրա թաղման կարգ կատարեցէ։ Երկու քոյր եկեղեցիներու այս սիրալիր յարաբերութիւն փափագելի է որ ամեն երկիրներու մէջ նոյն աստիճան մշակուի, մանաւանդ ի Պուլկարիա, ուր տիրող տարրը բնաւ պատճառ մը չունի հայ ազգին ու եկեղեցիին հետ թոյլ վերաբերուելու։

Ա. Զ. Դ.

Յառաջիկայ սեպտեմբեր 19ին նոր թաղ. խորհրդի մը ընտրութեան պիտի ձեռնարկուի Սահմանադրութեան օրէնքի համաձայն, ուստի այս առթիւ թախանձագին կը խնդրեմ արգոյ հասարակութեանէն, որ բարեհաճին ազգասիրաբար Ս. Պատարագի աւարտումէն քիչ ետք նոյն օր Ազգ. վարժարան գալ։

Ամեն անոնք որ ընտրելու իրաւունք ունին, կը սիրեմ յուսալ որ զերկայս իբր հրաւիրագիր համարելով կը փութան հանգէպ ազգին ունեցած պարտքերին յիշեալ օրը խղճի մտօք կատարելու։

Մնամ աղօթարար
Տ. Մարտիրոս Մարտիրոսեան

ՍԹՐԱՆՃԱ. ԳՕՄԻԹԵՍԻ

1896տա թէչքիլ օլընմըլ օլան Սթրանճա վաթանբերվերան շիրքէթի տիւն սէվինճիլի պիր հարէ. քէթտէ իտի։

Իշպու շիրքէթ էտիրնէ վիլայէթի Պուլկարարընտան միւթէշէքիլ օլուպ, վաթանլարընը թիւրք մէզալիմիտէն գուրթարմագ մագ. սէտի իլէ թէչքիլ օլընմըլ օլմաղլէ, պու մագսէտի խալիմէրսէտէ վասըլ օլմագ իշիւն սիւհազ գուվ. վէթի իլէ վէ գանա պէտէլ սէր. պէստիյէթիին էլէ կէշիրմէք թաւ. ըիւրիին ինթիլասպ իթմիշ տիր։

Շիրքէթ քէնտիսինէ ալիտ պիր կիւզէլ պանտէրա թէրթիպ ու թէճհիզ իթմիշ օլուպ, տիւն իշպու պանտէրանըն թագտիս ալընը շէհրիմիզ Սաէտիւնէնիէ սալընընտա իճրա օլընտը։ Շիրքէթտէն պիզ տախի մախսուս տալէթնամէ գապուլ իթմիշ օլմաղլէ սաաթ 11 1/2տա թագտիս ալընը էտիրնէ վիլայէթի իքի բաբաս թարաֆըն տան իճրա օլուտը։ Վարնատան վէճիվար գաղալարտան շիրքէթիին երկզէրճէ ազալարը մահալը մէզքիւրէ շիթապան օլմուշարը. տը. պուլարտա 3-5 վոյդոտալար տախի հազըր տը։

Տուալարտան սօնրա շիրքէթին ըշիսի Ս. Բէթը Տրակուլէֆ վա. թանբերվէրի պիր նուլթգ իրատի. տէրէք պանտէրայը մէրգուլ վոյ. վոտալարա թէսլիմիէ «պու մու. գատտէս պանտէրայը տիւշմանա վէրմէմէք իշիւն էօլէսինիզ» տէ. տի. տիկէրէր իքի քիշի տախի, նուլթգ իթտիլէր, Պիլախէրէ պան տա միւզիլէ վէ հուրա սէտալա. ըր իլէ հազըրան շէհրին պազը սօգազլարընը կէզէրէք Ս. Տրա. կուլէֆին խանէսի էօնիւնտէ պիր

գաշ նուլթգլարտան սօնրա միւզի. քանըն բահպէրիկի իլէ հոռօ չէ. քիտի. մալիւմ օլտըղը իւզրէ Պուլկարարտա հէր շէյ հոռօ իլէ պիթէր։

Ինշալլահ Սթրանճա շիրքէթի պու նիւմայիշաթտան սօնրա ամէ. իլիաթա տախի պաշլար։

ՄԻԻԹԵՆԷՎ ՎԻՅԵ

Գոնթթանթիմիս իսմինտէ պիր ուֆագ բուլ վաբօրըն՝ Ղալաթա ըրխտըմը էօնիւնտէ, գազանը չէ. տիտ սուրէթտէ բաթլտըմը օլմաղլէ, վաբօր բարշալանմըլ վէ գա. բիթանըն վէ իշէրաէ պուլընտան թայֆէլէրի զարգ ու թէլէֆ օլմուշար տըր. Գազանըն բաթլա. մագ սէտաւընտան Ղալաթա վէ ճիվար էհալիսի նակէհան տէհէ. թէ ուղլամըլ վէ մաղազալար գա. բանմայա պաշլամըլ տըր. Սէֆիլ Սթանպօլ էհալիսի պօմպա սէտա. սը գանի իտուպ իւշ սէնէ էվլէքի գըրկընընտէ տէհէթիին պիր տա. խի հըսս իթմիշ տիր։

—Վիէննանըն թալկէպլաւո նամ կազէթանըն նէշը իթտիկի պիր հալատիս պէօլիւք իթէսիր հա. սըլ իթտի։

Գարատաղ Բրէնսինին Սթան. պօլա կիթմէքտէն մագսէտի քէն. տիսին Սերպիա թալթընա տա. վէթ օլընմասընտ տայիր Սուլթա. նըն հիւանի գապուլընը էլտէ իթմէքտէն իպարէթ իմիշ. Բրէնս հալը իշիւն Սուլթանա ֆէնա թէ. ֆէրընուլթար սէօլլէմիշ վէ Սուլթանը գանտըրմագ իսթէմիշ քի էկէր Սիւրպիա իլէ Գարատաղ պիր. լէշէէք օլուր իսէ թուրքիա ի. շիւն չօգ ֆաիտէլի օլաճագ վէ Արնափուլար սիւքիւնէթիլի պիր հալէ վաղ օլընմագլար տըր։

—Այտըն վիլայէթիտէն շիտ. տէթիլի պիր գէլգէլէ վուգու պու. լուպ 15 սանիյէ տէվամ իթմիշ տիր. իզմիրտէ, Մաղնիսատա վէ ճիվարարտա վէ քէօլլէրտէ բէք չօգ պինալար երգըմըլ վէ ինսան. լար թէլէֆ օլմըլ տըր. չօգ եր. տէ էհալի սօգազլարտա վէ աշըգ. աա գալմըլ օլմաղլէ, Սթանպօլ. տան չաաղըլար վէ իսանէ եօլլա. նըլմըլ տըր. քէզա սագաթ վէ եարէլիլէր թէտալի իթմէք իշիւն Սթանպօլտան 14 թապիպ վէ պիր թագըմ ճէրրահլար, վէ էճգաճը լար կիթմիշէր։

—Աւտորիանըն վիւքէլասը իս. թիֆա իթմիշ տիր։

—Ամէրիգալըլար էլան Ֆիլի. բինիլէր իլէ ուղրաշմագտա տըր. լար. իքի Ամէրիգա զըրհըսը եէրլի աաղըլարըն պիր մէրքէզինի թօբա թուլթուլար. Ֆիլիբիլի. լէր տախի գարատան թօբար իլէ մուգալմէմէթ իթմէքլէ ամէրիգա. վաբօրլարընը կէրի չէքիլմէկէ մէճ. պուր իթտիլէր։

—Ալմանիա իմբէրաթօրը սօն տէֆա թիւրքիա կէլմէմիտէ գա. պուլ իթտիկի գըլմէթտար հէտի.

յէլէրէ մուգապիլ քէնտի ֆօթօկ. րաֆլարընը կէօնտէրմէք վատ իթմիշ օլտըղը իւզրէ, կէշէն հաֆթա մէզքիւր ֆօթօկրաֆլար Սթանպօ. լա եէթիշմիշ տիր, Սուլթան պա թէլէկրաֆ իմբէրաթօրա թէշէ. քիւրաթընը պէյան իթմիշ տիր. Մալիւմ օլտըղը իւզրէ պու ֆօ. թօկրաֆլար վիլհէլմին թիւրքիա. տան կէօթիւրտիկի անթըգալարըն գըլմէթիին նիսպէթէն, եահուտի. նին պիր չօճուղըն էլինէ պիր ալ. ինէ բարշաաը վէրուպտէ պուլըն եէրտէն պուլմըլ օլտըղը պիր քէ. սէ ալթընը ալմասընա պէնգէրքի չօճուգ սէվինիլէք էվէ գօշար. Սուլթանտա թէշէքիւրաթ պէյան իտէր։

—Սթանպօլտա եէնիտէն կէնճ թիւրքլէրտէն ալթը քիշի տէրց տէսթ օլընուպ, Սաատէթտին բա. չաաան իսթիլթագ օլընտըլար։

—Բուս վէ Աֆղանիսթան հու. տուտարընտա իսլամ գապիլէլէ. ըին ըշիսլէրինտէն Մուրատ խան քէնտի աաաալարը իլէ Մէհմէտ խան գօմանտաւընտա պուլընտան Աֆղանիլէր արասընտա վուգու պուլմէն գանըլ վէ տէհէթիլի պիր մուհարէպէտէ Մուրատ խան բէ. ըիշան օլարտագ Բուսիա թարաֆը. նա գաշտըղը թէլէկրաֆլար իս. պար իթմիշ տիր։

—Կիրիտ աաաաւընտաքի իսլամ. լարը թիւրքիայա հիճրէթտէն մէնն իշիւն Բրէնս Եորկի ճամիլէ. ըի զիյարէթ իթմիշ, իսլամար. տան մինասիպլէրինէ մէմուրիլէթ վէրմիշ իսէտէ հիճրէթ ֆիքրի սէօնմէմիշ, Բրէնսին թէտաղիլէրի ֆաիտէ իթմէմիշ օլուպ, Կիրիտ. տէն շիմտիյէ գատար 40,000 իս. լամ միւլթէրինի վէ աաաղիլէրինի թէրթլէ սէֆիլ վէ բէրիշան հա. տէ նագլ օլընմըլար տըր։

Յագաթ չօգլարը թիւրքիայը պիր ճէննէթ գանն իթմէլէրինէ մուղայիր պիր հալտէ կէօրտիւք. լէրինտէն հիճրէթ իթտիլէրինտէն բէշիման օլմըլար տըր։

—Տրէյֆիւս «Ֆիկարօ»նըն պիր մուհարըրիլ իլէ կէօրիւմէսինտէ տէմիշ տիրքի թէնէրալ Մէսիէ ֆէնա վէ ախլէքի համիտիսի պօ. զուգ պիր աաէմ, իսթէրհազի ի. սէ պիր տօլանտըրճը տըր. Պանա օլընմագ աֆիլը, հալիմին խա. ֆիֆիլէնմէսի իշիւն գապուլ իտէ. ճէկիմ, պէն պիր իտէայա գուր. պան կիթտիմ. ֆագաթ սօն նօգ. թայա գատար իտէի նամուս իթմէկէ չալըմագ իշիւն գարար վէրմիշիմ։

—Պուլկարիանըն հիւքիւմէթի հաղըրէսինէ մուլալիֆ օլան Սօ. ֆիա կազէթալարը Ֆէխամ. Բը. րէնսին վէ մինիսթէրէրին Սօֆի. այա ալտէթիլէրինտէ բօլիթիգա. նըն չու տուլկուլըղը թաղըրիլ վէ թէպտիլ օլաճաղընը եաղըլըրօր։

—Էվլէտէն եաղմըլ օլտըղըմըլ իւզրէ։ Պուլկարիանըն գուվլէի աաքէմիյէսինի թէվիլի իթմէք մէմուրիլէթի իլէ Չարըն կէօնտէ. միշ օլտըղը բուս իվա գօմանտա. նը Ֆիլիպիյէ տախի աղիմէթ իթմիշ օլմաղլէ, օրանըն թօբճը պէ. սիւվարիլի կէօլտէն կէշիլմիշ տիր. բէվալէթէ կէօրէ՝ սիւվարիլի բէք պէկէնմէմիշ տիր։

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ

Կը պարունակէ այսօր ժող. վուրդի ամեն դասակարգէ երգուող հին և նոր երգերը։

Կը ճախոշի իրաւունքի խմբա. գրատուներ։

ԳԻՆ 1 ՅՐԱՆՔ

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆՔ»

Գրքեր, տետրակներ, հրուերագրի. տոմարներ եւայլն կը տպագրուին և մեաքիւրամատչելի գնեղով ու դոն. ցուցիչ պայմաններով։ Ֆրանսիէն, Յունասիէն և Պուլկարիէն վոքրիլ գործեր եւս կը պատրաստուին։

Օտար երկիրներէ և ուրիշ քաղա. նէրէ եկած յանձնարարութիւնք փու. թով եւ ճշգիւ կը գործադրուին։

ԲՈՒԼԻ ՔՕԼԷՔՍԻՈՆ

Բուլի սքանչելի քօլէքսիօն ալ ծախու հանուած է, աւելի քան երկու հազար բուլերով, որոնց մէջ բաղաթիւ հազուագիտներ. մի. ալն քօլէքսիօնը առանց բուլի, կ'արժէ 50 ֆրանք, Գնել փափաքողները գիմն խմբագրութեանս։

ՄԵԾ ՊԻՃԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍՕՍԻՍ ԲԱՆԱԲԻ	
ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆ ԵՐԱՇԽԱՆՈՒԹԵԱՆ Ա. ՊԱՐԵՆԻՆ Է 500,000 ՀՐ. ՈՍԻ 50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին և տեւեալ կերպով, ներկայ տարւոյ՝ Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր. Յուլիս 7 1,500 » 135,180 » Օգոստ. 4-5 2,000 » 241,780 » Սեպտ. 3-4 » » 309,080 » » 23-24 » » 363,250 » Հոկտ. 13-31նոյ. 16000 » 3389,040 »	

ԳՆԵԼՈՒ ԵՆ ՈՍԻՔԻՆԵՐԸ	
Գնելու Են	Մէկ ութերդ.
5	1.25 ֆ.
10	2.50 ֆ.
15	3.75 ֆ.
20	5.00 ֆ.
25	6.25 ֆ.
30	7.50 ֆ.
35	8.75 ֆ.
40	10.00 ֆ.
45	11.25 ֆ.
50	12.50 ֆ.
55	13.75 ֆ.
60	15.00 ֆ.
65	16.25 ֆ.
70	17.50 ֆ.
75	18.75 ֆ.
80	20.00 ֆ.
85	21.25 ֆ.
90	22.50 ֆ.
95	23.75 ֆ.
100	25.00 ֆ.
105	26.25 ֆ.
110	27.50 ֆ.
115	28.75 ֆ.
120	30.00 ֆ.
125	31.25 ֆ.
130	32.50 ֆ.
135	33.75 ֆ.
140	35.00 ֆ.
145	36.25 ֆ.
150	37.50 ֆ.
155	38.75 ֆ.
160	40.00 ֆ.
165	41.25 ֆ.
170	42.50 ֆ.
175	43.75 ֆ.
180	45.00 ֆ.
185	46.25 ֆ.
190	47.50 ֆ.
195	48.75 ֆ.
200	50.00 ֆ.